Ջանի Ռոդարի

Հեքիաթների ժողովածու

Երկիր, որտեղ բոլոր մարդիկ կարագից էին պատրաստված

Մի անգամ մեծն ճանապարհորդ Ջովանինո Անգործը հայտնվեց մի երկրում, որտեղ բոլոր մարդիկ կարագից էին պատրաստված: Նրանք արևից հալչում էին ,այդ պատճառով ամբողջ օրը թաքնվում էին ստվերում և սառը վայրերում: Ապրում էին նրանք մի երկրում, որտեղ տների փոխարեն ամեն տեղ հսկայական սառնարաններ էին: Ջովանինոն քայլում էր այդ տարօրինակ քաղաքի փողոցներով և տեսավ, թե ինչպես են այդ քաղաքի բնակիչները նստել իրենց սառնարան-տնակների պատուհանների մոտ՝ գլխներին սառույցի կտորներ դրած: Յուրաքանչյուր սառնարանի դռան վրա կախված էր հեռախոս, որպեսզի հնարավոր լիներ բնակիչների հետ խոսել:



-Բարև,-ասաց Ջովանինոն՝ վերցնելով մի սառնարանի խոսափողը:

-Բարև,-պատասխանեցին նրան:

-Ո՞վ է խոսում,-հարցրեց Ջովանինոն:

-Այն երկրի թագավորն է, որտեղ բոլոր մարդիկ կարագից են պատրաստված: Իսկ ես բարձր որակի սերուցքից եմ, որը քամված է ամենալավ տեսակի շվեյցարական կովերից: Դուք ուշադրություն դարձրեցի՞ք իմ սառնարանին:

-Ոչ, իսկ ինչից է ձեր սառնարանը... Դե իհարկե, այն մաքուր ոսկուց է: Իսկ դուք այդտեղից երբևէ դուրս չե՞ք գալիս:

-Ինչու չէ, մեկ-մեկ դուրս եմ գալիս, ձմռանը՝ սաստիկ ցրտին: Եվ զբոսնում եմ սառցե ավտոմեքենայով:

-Իսկ եթե, մինչ ձերդ գերազանցությունը զբոսնում է, արևը շողա ...

-Չի կարող արևը շողալ, դա արգելված է: Ես հենց նույն պահին կհրամայեմ իմ զինվորներին նրան ձերբակալել և բանտ գցել:

-Չէ՜ մի, բանտ,- գայրացավ Ջովանինոն, ցած գցեց խոսափողը և հեռացավ այդ տարօրինակ երկրից՝ շարունակելով ճամփորդել ուրիշ երկրներում:



Մուկը, որը կատուներ էր ուտում

Մի նիհար մուկիկ, որն ապրում էր գրադարանում, մի օր որոշեց իր ընկերներին հյուր գնալ, որոնք նկուղում էին և շատ հեռու էին ողջ աշխարհից:

Դուք գաղափար չունեք, թե ինչ է կատարվում աշխարհում,-հայտարարեց նա իր երկչոտ հարազատներին,- դուք երևի նույնիսկ կարդալ չգիտեք:

- Կարևորը դու շատ բան գիտես,- հոգոցով ասացին նրանք:
- Դե, օրինակ, դուք երբևէ կատու կերել է՞ք:
- Ինչ ես ասում: Աստված մի արասցե: Մեզ մոտ ավելի շուտ կատուներն են մկներ որսում:



- Դա նրանից է, որ դուք անշնորհք եք: Ես իմ կյանքի ընթացքում քանի՛ կատու եմ կերել: Հավատացնում եմ ձեզ, նրանից և ոչ մեկը նույնիսկ ծպտուն չի հանել:

- Եվ ինչ, կատուները համեղ ե՞ն:

- Համեղ են: Պարզապես մի քիչ թղթի և տպագրական ներկի համ է գալիս: Բայց դրանք դատարկ բաներ են: Շուն փորձելու բախտ ունեցել եք, չէ՞:

- Ի՛նչ ես ասում, ի՛նչ ես ասում:

- Ես հենց երեկ մեկին կերա: Օվչարկա: Նա բավականին լուրջ ճանկեր ուներ, բայց, ինչևէ, նա շատ հանգիստ, առանց ծպտուն հանելու, թողեց իրեն ուտել:

- Եվ նա էլ է՞ր համեղ:

- Շա՛տ: Պարզապես սա էլ մի քիչ թղթային համ ուներ: Իսկ ռնգեղջյուր չե՞ք փորձել:



-Ինչ ես ասում: Մենք՝նույնիսկ չգիտենք ինչ տեսք ունի նա: Նա ինչի՞ է ավելի շատ նման՝ պարմիջանակա՞ն, թե՞ հոլանդական պանրի:

- Նա, իհարկե, նման է ռնգեղջյուրի: Իսկ փիղ կամ կուսակրոն, արքայադուստր կամ տոնածառ, երևի երբևե բախտ չի վիճակվել ուտել:

Այդ պահին կատուն, որը թաքնվել էր անկյունում դրված ճամպրուկների ետևում, սարսափազդու մլավոցով թռավ նկուղի ճիշտ կենտրոնը: Դա ամենաիրական կենդանի մեծ կատու էր փարթամ բեղերով և երկար ճանկերով:

Մկները մեկ վայրկյանում թռան իրենց բները: Իսկ գրադարանային մուկը, տեսնելով կատվին, այնպես զարմացավ, որ քարացավ իր տեղում, ասես խաղալաք լիներ: Կատուն խփեց նրան թաթով և սկսեց խաղալ հետը:

- Ա՛, այդ դու ես, այն մուկը որ կատուներ է ուտում:

- Ես եմ, ձերդ պայծառափայլություն... Դուք պետք է հասկանաք ինձ... Ախր ես գրքերի մեջ եմ ապրում...

-Այո, իհարկե, հասկանում եմ, հասկանում եմ: Դու կատու ես ուտում, թղթի վրա նկարված, տպված ...

- Երբեմն, և այն էլ դիտական նպատակներով....

Կատու ուտող մուկը

Ուսումնական կոնֆետը

« Բի » մոլորակի վրա գրքեր չկան: Գիտելիքներն անյտեղ վաճառում և գնում են շշերի մեջ:

Պատմությունն, օրինակ, վարդագույն ջուր է, գույնով շատ նման նռան հյութին, աշխարհագրությունը՝ անանուխի կանաչ ջուր, իսկ քերականությունը՝ անգույն հեղուկ է և իր համով հանքային ջուր է հիշեցնում:

Այս մոլորակի վրա դպրոցներ չկան: Ամեն մեկն իր տանն է սովորում: Առավոտյան բոլոր երեխաները, կախված տարիքից, պետք է մի բաժակ պատմություն խմեն, մի քաի գդալ մաթեմատիկա ուտեն, և այդպես շարունակ:

Եվ դուք մտածեք, այսքանից հետո, երեխաները դեռ կամակորություն են անում:

-Խելացի եղիր,-համոզում է մայրը: - Մ՞թե դու չգիտես, թե ինչքան համեղ է կենդանաբանությունը: Ախր այն շա տ, շա տ քաղցր է: Հարցրու Կարոլինային / Կարոլինան տնային էլեկտրական ռոբոտ է/:


Արբանյակ
<<ԲԻ>>մոլորակ: Գիտնականները վաճառում են
շշկով: Գրքեր չկան:

Կարոլինան մեծահոգաբար համաձայնում է փորձել շշի պարունակությունը: Լցնում է մի քիչ իր բաժակի մեջ, խմում է և բերկրանքով վայելում:

-Օ՜, ինչ համեղ է,- բացականչում է նա, և անմիջապես սկսում է շարադրել իր ստացած զիտելիքները. Կով՝ որոճող անասուն, սնվում է խոտով և մեզ ալիս է շոկոլադե կաթ...

- Ահա տեսնում ես,-հաղթանակած ասում է մայրը:

Տղան հնազանդվում է: Նա մի թեթև զուշակում է, որ խոսքը կենդանաբանության մասին չէ, այլ ձկան յուղի, բայց հետո հավաքում է իրեն, փակում է աչքերը և կուլ է տալիս դասը մեկ կումով, ծափահարությունների ներքո:

Կան այնտեղ նաև ջանասեր աշակերտներ: Կան աշխատասեր, և նույնիկ ուսման ծարավներ: Նրանք արթնանում են կեսգիշերին, զգույշ վերցնում են պատմության շիշը և խմում են մինչև վերջին կաթիլը: Նրանք շատ կրթված են դառնում:



Մանկապարտեզ հաճախող երեխաների համար էլ ուսումնական կոնֆետներ կան: Դրանք իրենց համով ելակ կամ արքայախնձոր են հիշեցնում, և պարունակում են մի քանի պարզ բանաստեղծություն, շաբաթվա օրերի անվանումները, և մեկից մինչև տասը թվերը:

Իմ ընկեր տիեզերագնացը, ինձ մի այդպիսի կոնֆետ տվեց որպես հիշատակ: Ես այն իմ աղջկան տվեցի, և նա անմիջապես սկսեց մի ծիծաղելի բանաստեղծություն կարդալ, գրված « Բի » մոլորակի լեզվով: Այն մոտավորապես այսպես էր հնչում.

Անտա, անտա, պերո պերո,

Պինտա պինտա, պիմ պերո:

Թափանցիկ Զակոմոն

Ժուկով ժամանակով մի հեռավոր քաղաքում լույս աշխարհ եկավ մի թափանցիկ երեխա: Այո, այո, թափանցիկ: Նրա միջով կարելի էր տեսնել այնպես, ինչպես մաքուր աղբյուրի ջրի կամ էլ օդի միջով: Ինչպես բոլոր մարդիկ, իհարկե, նա էլ միս ու արյունից էր, բայց թվում էր, թե նա ապակուց է: Բայց երբ նա ընկնում էր, ամենևին էլ չէր փշրվում, ճակատին էլ աճում էր մի մեծ թափանցիկ կոշտուկ:

Բոլորը լավ տեսնում էին, թե ինչպես էր նրա արյուը շարժվում, ինչպես էր նրա սիրտը բաբախում և ազատ կարդում էին նրա մտքերը, որոնք անցնում- դառնում էին նրա գլխում, ինչպես աքվարիումի խայտաբղետ ձկնիկներ:

Մի անգամ տղան պատահմամբ ստեց, և մարդիկ հենց այդ պահին տեսան, թե ինչպես նրա գլխում մի հրե գունդ վառվեց: Տղան անմիջապես ուղղեց իր սխալը և ճշմարտությունն ասաց, և հրե գունդն ակնթարթորեն անհայտացավ:

Այդ օրվանից ամբողջ կյանքում նա ոչ մի անգամ և ոչ մի տառ սուտ չասաց:

Մի այսպիսի դեպք էլ պատահեց: Մի ընկեր նրան վստահեց իր գաղտնիքը: Եվ բոլորը միանգամից տեսան, թե նրա գլխում ինչպես սկսեց անհանգիստ պտտվել մի սև գունդ: Եվ գաղտնիքը դադարեց գաղտնիք լինելուց:

Ժամանակ անցավ, տղան մեծացավ, դարձավ պատանի, հետո տղամարդ: Բայց ամեն ոք առաջվա նման կարող էր հեշտ ու հանգիստ կարդալ նրա բոլոր մտքերը: Նա նույնիսկ կարիք չուներ բարձրաձայն պատասխանել իրեն ուղղված հարցերին:



Այդ տղայի անունը Զակոմո էր, բայց մարդիկ նրան Թափանցիկ Զակոմո էին ասում:

Մարդիկ սիրում էին նրան ազնվության համար և այն բանի համար, որ նրա կողքին ամեն ինչ դառնում էր ազնիվ և բարի:

Բայց մի դժբախտ օր երկրում հեղափոխություն եղավ, և իշխանության գլուխ եկավ մի դաժան բռնակալ:

Շատ դժվար ժամանակներ սկսվեցին: Ժողովուրդը տառապում էր աղքատությունից, անարդարություններից և պատիժներց:

Այն մարդիկ, ովքեր համարձակվում էին ընդդիմանալ բռնությանը, միանգամից անհետ կորչում էին: Իսկ ովքեր բացեիբաց պայքարում էին սպանությունների դեմ, անմիջապես գնդակահարվում էին: Վախեցածների և ստորացվածների նույնկերպ էին վարվում:

Շոկոլադե ճանապարհը

Բառլետտայում ապրում էին երեք փոքրիկ տղա՝ երեք եղբայր: Մի օր նրանք զբոսնում էին քաղաքից դուրս և հանկարծ ինչ-որ տարօրինակ ճանապարհ տեսան. հարթ, փայլուն և ամբողջովին շագանակագույն:

-Հետաքրքիր է, ինչից է պատրաստված այս ճանապարհը,- զարմացավ մեծ եղբայրը:

- Չգիտեմ ինչից է, բայց հաստատ տախտակներից չէ,- նկատեց միջնեկ եղբայրը:

- Ասֆալտի էլ նման չէ,-ավելացրեց փոքր եղբայրը:

Գուշակում էին նրանք, գուշակում, հանկարծ ծնկի իջան և սկսեցին լիզել ճանապարհը: Իսկ ճանապարհը, պարզվում է, ամբողջովին շոկոլադե սալիկներից էր պատրաստված: Եղբայրներն, իհարկե, իրենց չկորցրին և սկսեցին ուտել այն: Կտորը կտորի հետևից ուտելով՝ եղբայրները չնկատեցին ինչպես մութն ընկավ: Իսկ նրանք դեռ ուտում ու ուտում էին: Այդպես կերան ամբողջ ճանապարհը: Ոչ մի կտոր չմնաց: Կարծես թե ոչ ճանապարհ էր եղել, ոչ էլ շոկոլադ:



-Որտե՞ղ ենք մենք հիմա,- զարմացավ մեծ եղբայրը:

-Չգիտեմ որտեղ ենք, բայց սա Բառին չէ,- պատասխանեց միջնեկ եղբայրը:

-Եվ իհարկե մենք Մոլետտեում չենք,-հավելեց փոքր եղբայրը:

Մոլորվեցին եղբայրները, չգիտեին ինչ անել: Իրենց բախտից մի գյուղացու հանդիպեցին, նա իր սայլակով հանդից էր վերադառնում:

- Եկեք ձեզ տուն տանեմ,-առաջարկեց գյուղացին: Եվ տարավ եղբայրներին Բառլետտա՝ ուղիղ իրենց տան մոտ:

Տղաները իջնում էին սայլակից և հանկարծ տեսան, որ այն ամբողջովին թխվածքաբլիթներից է պատրաստված: Շատ ուրախացան, և առանց երկար մտածելու սկսեցին ագահորեն ուտել այն: Սայլակից էլ ոչինչ չմնաց, նույնիսկ անիվները կերան:

Այդպես մի անգամ բախտը ժպտաց երեք եղբայրներին Բառլետտայից: Ոչ ոքի բախտը դեռ այդպես չէր բերել, և ով գիտե, բախտները կբերի երբևէ:



Ինչպես էր մի տղա խաղում հենակով

Առավոտ էր: Փոքրիկ Կլադիոն խաղում էր դարպասների մոտ, իսկ փողոցով, կռացած, հենակով, մի ծերունի էր անցնում ոսկեզօծ ակնոցներով: Դարպասների մոտ, նրա հենակն հանկարծ ընկավ: Կլավդիոն բարձրացրեց այն և տվեց ծերունուն: Նա ժպտաց:

- Շնորհակալություն: Բայց գիտես, ինձ այն այլևս հարկավոր չէ: Ես առանց հենակի էլ կարող եմ հանգիստ քայլել: Պահիր այն քեզ, եթե ուզում ես:

Եվ գնաց պասասխանի չսպասելով: Երևում էր, որ նա արդեն այդպես կռացած չէր:

Կլավդիոն այդպես էլ մնաց կանգնած հենակը ձեռքում, և չգիտեր, ինչ անել դրա հետ: Այն սովորական փայտե հենակ էր, կորացած բռնակով և երկաթե ամրակով: Հատուկ ոչինչ չկար այդ հենակի մեջ:

Կլավդիոն, մի երկու անգամ հենակով խփեց գետնին, և հետո, պարզապես խաղալով վերցրեց և հեծնեց հենկին, ինչպես խաղալիք ձիու: Եվ հանկարծ, իսկապես, հայտնվեց ձիու վրա. Մի հրաշալի սև նժույգի ճակատին սպիտակ աստղով: Նժույգը խրխնջաց, պոկվեց տեղից, և սկսեց վազել բակով՝ ոտքերի տակից կայծեր բաց թողնելով:



Երբ Կլավդիոն, հմայված և մի քիչ զարմացած, իջավ ձիուց, ապա հենակն էլ նորից սովորական փայտե հենակ դարձավ: Նրա վրա ձիու ոչ մի ոտնահետք չկար, և միայն երկաթե ամրակն էր, չկար փարթամ բաշը, այլ միայն կոր բռնակն էր:

Իսկ ի՞նչ կլինի, եթե նորից փորձեմ,- մտածեց Կլավդիոն:

Նա նորից հեծնեց հենակը: Այս անգամ, այն մեծ ուղտի վերածվեց, իսկ բակը հսկայական անապատի: Բայց Կլավդիոն չվախեցավ, և սկսեց ուսումնասիրել անծայրածիր անապատը՝ փորձելով օազիս գտնել:

Սա, իհարկե, կախարդական փայտիկ է,-որոշեց Կլավդիոն, և երրորդ անգամ այն հեծնեց. Այս անգամ նա սլանում էր վազքուղիով՝ կարմիր սպորտային մեքենայով, իսկ տրիբունաներում աղմկում էին երկրպագուները. Կլավդիոն առաջինն հասավ վերջնակետին:

Հետո հենակը մոտորային նավակ դարձավ, իսկ բակը՝ խաղաղ կանաչ ծով: Հետո Կլավդիոն հայտնվեց տիեզերական նավում՝ իր ետևից թողնելով աստղային արահետ...

Բայց ամեն անգամ, երբ Կլավդիոն ոտքը դնում էր գետնին, հենակն ընդունում էր իր սովորական տեսքը՝ հարթ, կոր բռնակով և ժանգոտ երկաթե ամրակով:

Օրը շատ շուտ թռավ խաղերի մեջ: Իսկ երեկոյան Կլավդիոն նորից դուրս եկավ բակ և նորից տեսավ ծերունուն ինչ որ տեղից վերադառնալուց: Կլավդիոն հետաքրքրասիրությամբ ուսումնասիրեց նրան, բայց ոչ մի արտասովոր բան չտեսավ. Սովորական ծերունի էր, մի քիչ հոգնած երկար ճանապարհից:

-Հավանեցի՞ր հենակը,- հարցրեց նա Կլավդիոյին:

Կլավդիոն կարծեց ծերունին ուզում է հետ վերցնել հենակը, պարզեց այն նրան ամաչելով.

-Շնորհակալություն:

Բայց ծերունին շարժեց գլուխը.

-Թող այն քեզ մնա,-ասաց նա,-ինչիս է պետք հիմա ինձ այդ հենակը: Դու նրա օգնությամբ նույնիսկ թռչել կարող ես, իսկ ես միայն հենվում են նրան: Ես կարող եմ պատին էլ հենվել, ոչ մի տարբերություն:

Եվ ծերունին գնաց, որովհետև չկա ավելի երջանիկ մարդ աշխարհում, քան նա, ով կարող է ինչ-որ բան նվիրել երեխաներին:

Շունը,որը հաչալ չգիտեր

Կար-չկար,մի շուն կար:Նա հաչալ չգիտեր: Ո՛չ հաչալ,ո՛չ մլավել,ո՛չ բղավել,ո՛չ էլ խոսել: Դա մի սովորական փոքրիկ շնիկ էր: Ոչ-ոք չգիտեր՝ որտեղից է նա հայտնվել այս գյուղում:Նա երբեք էլ չէր իմանա,որ հաչալ չգիտի,եթե չլինեին հարևանները:-Ինչու՞ չես հաչում,-զարմանում էին նրանք:

-Ես հաչալ չգիտեմ,որովհետև տեղացի չեմ,-պատասխանում էր շունը:

-Ա՜յ թե զարմացրիր:Յուրաքանչյուր շուն էլ հաչում է:

-Ինչի՞ համար:

-Որովհետև շունը շուն է,-պատասխանում էին հարևանները:

-Բոլոր շներն էլ հաչում են կատուների,լուսնի,չար անցորդների վրա:Հաչում են,երբ տխուր են,երբ ուրախ են:Ավելի հաճախ նրանք հաչում են ցերեկը,սակայն,եթե իրենց տանջում է անքնությունը,հաչում են նաև գիշերը:Իսկ դու երևի հիվանդ ես:Գնա՛ անասնաբույժի մոտ:

Խեղճ շունը,լսելով նրանց,հազիվ էր զսպում արցունքները:Մի երիտասարդ աքաղաղ խղճաց տխուր շանը.

-Նայի՛ր ինձ և կրկնի՛ր:Եվ նա երեք անգամ բարձր ծուղրուղու կանչեց:

-Վա՜յ,շատ դժվար է,-ասաց շունը:

-Բացարձա՛կ:Ամենակարևորը,հետևի՛ր կտուցիս և լայն բացիր բերանդ:Եվ աքաղաղը նորից ծուղրուղու կանչեց: Շունը փորձեց կրկնել,բայց չստացվեց,միայն ինչ-որ քխե-քխե կարողացավ արտաբերել: Աքաղաղները վախեցած ցրվեցին:

-Ոչի՛նչ,-հանգստացրեց աքաղաղը,-առաջին անգամի համար շատ լավ էր:Դե՛,նորից փորձիր:

Շունը կրկին փորձեց ծուղրուղու կանչել,բայց նրա մոտ նորից ոչինչ չստացվեց:Դրանից հետո նա կամաց-կամաց սկսեց պարապել:Երբեմն գնում էր անտառ.այնտեղ ոչ-ոք չէր խանգարում և կարող էր ծուղրուղու կանչել, որքան ուզում էր: Եվ վերջապես, մի օր առավոտյան, նրան անտառում հաջողվեց այնքա՛ն հնչեղ և գեղեցիկ ծուղրուղու բացականչել,որ աղվեսը, լսելով աքաղաղի ձայնը,մտածեց.

« Վերջապես աքլորիկը որոշեց այցելել ինձ:Պետք է նրան շնորհակալություն՝ հայտնել այցելության համար » :Եվ շտապեց նրա մոտ՝ չմոռանալով վերցնել դանակ,պատառաքաղ և անձեռոցիկ,որովհետև աղվեսի համար,ինչպես հայտնի է,չկա ավելի համեղ խ՛որտիկ,քան աքլորիկը:Գնաց աղվեսը անտառի խորքը և ի՛նչ տեսավ.խոտերի մեջ նստած է մի շուն,ուրախությունից թափահարում է պոչը և ծուղրուղու կանչում:Աղվեսը կատաղեց.

-Ախ,այդ դու՞ էիր ուզում ինձ ծուղակը գցել:

-Ի՞նչ ծուղակ,-զարմացավ շունը:

-Ծուղրուղու ես կանչում,ինչպես մի մոլորված աքաղաղ:Լավ է,որ քեզ շուտ նկատեցի:Բայց դու անարդար վարվեցիր:Սովորաբար,շներն իրենց հաչոցով ինձ զգուշացնում են, որ մոտակայքում որսորդ կա:

-Երդվում եմ,ես նպատակ չունեի ինչ-որ մեկին որսալ:Ես անտառ եմ եկել պարապելու նպատակով:

-Այդ ի՞նչ ես պարապում,-չհավատալով հարցրեց աղվեսը:

-Հաչալ եմ սովորում:Գրեթե սովորել եմ:Նայիր՝ինչ լավ է ինձ մոտ ստացվում՝ծուղրուղու :

Աղվեսը ծիծաղից քիչ էր մնում պայթեր:Նա թավալ էր գալիս խոտերի վրա և հազիվ չկծեց իր խիտ բեղերը:

Շունը ընկճված վազեց տուն:Խեղճ շանը տեսավ կկուն.

-Ո՞վ է քեզ վշտացրել,-հարցրեց կկուն:

-Ոչ-ոք,-հազիվ լսելի ձայնով պատասխանեց շունը:

կուկու
կուկու

-Այդ դեպքում ինչու՞ ես այդքան տխուր:

-Այն պատճառով,որ հաչալ չգիտեմ և ոչ-ոք էլ չի սովորեցնում:

-Եթե բանը միայն դրանում է,ես քեզ կօգնեմ:Ուշադիր լսի՛ր և կրկնի՛ր իմ հետևից՝ կու-կու-կու-կու...հասկացա՞ ր:

-Ինձ թվում է՝դա այնքան էլ դժվար չէ,-ասաց շունն անվստահ:

-Շաաա՛ տ հեշտ է,-բացկանչեց կկուն,-ես վաղ մանկությունից կարողանում եմ...Կրկնի՛ ր իմ հետևից՝ կու-կու-կու-կու..

-Կու-կու,-ցածր կրկնեց շունը:

Նա մեկ փորձեց,երկրորդ անգամ փորձեց և մեկ շաբաթ անց հիանալի կու-կու էր կանչում:

« Վերջապես ես նմանվեցի մյուս շներին » ,-ուրախանում էր շունը:Հիմա ես կարող եմ հա՛ մ լուսնի վրա հաչալ,հա՛ մ էլ չար անցորդների:

Եկան որսի ժամանակները :Անտառում էին հավաքվել Իտալիայի հմուտ և նորաթուխ որսորդները:Ոմանք կրակում էին միայն վայրի գազանների վրա,ոմանք էլ յուրաքանչյուր թռչունի և կենդանու վրա:Անգամ երգեցիկ սոխակին չէին խղճում:Ահա այդպիսի մի որսորդ լսեց,որ թփերի միջից կկվի ձայն է լսվում:Երկար չմտածելով՝նա հրացանով կրակեց:

-Գըմփ-գըմփ,-շան ականջի մոտ լսվում էին փամփուշտների ձայները:

Շունն ինչքան ուժ ուներ,փախավ:Նա չէր հասկանում՝ինչու՞ է որսորդը կրակում հաչող շան վրա:

Իսկ այդ ժամանակ որսորդը զուր ջանքեր էր թափում՝խոտերի մեջ թռչուն ման գալով:

« Երևի թռչունին գողացել է այս չարաբաստիկ շունը:Թե որտեղի՞ց նա հայտնվեց »,-մտածեց որսորդը:Եվ բարկությունից կրակեց իր բնից դուրս եկած փոքրիկ դաշտամկան վրա:Բարեբախտաբար,վրիպեց:

Իսկ շունը փախչում էր ավելի ու ավելի հեռու:Հանկարծ շունը կանգ առավ.այս ինչ տարօրինակ ձայներ են:Մոտակայքում ինչ-որ մեկը հաչում էր:

« Ո՞վ է սա:Ընձու՞ղտ:Չէ՛,հավանաբար,կոկորդիլոս է:Կոկորդիլոսը շատ վտանգավոր կենդանի է:Նրա մոտով պետք է աննկատ անցնել »,-մտածեց շունը:Եվ նա,թաքնվելով խիտ խոտածածկի մեջ,կամաց-կամաց մոտեցավ ձայնի կողմը:Նա էլ չգիտեր՝ ինչու,բայց սիրտը սկսեց արագ բաբախել:

hug-hug
hug-hug-hug

-Հա՛ֆ-հա՛ֆ:

Դա որսորդի շունն էր:

-Բա՛րև,շուն:

-Բա՛րև:

-Ի՞նչ տարօրինակ մռնչում ես:

-Մռնչու՞մ եմ,-վիրավորվեց որսորդի շունը:-Ես չե՛մ մռնչում,հաչում եմ:

-Դու հաչա՞լ գիտես:

-Իհարկե՛:Ես հո փղի նման շեփորի ձայն չե՞մ հանելու,կամ մռնչալու առյուծի նման:

-Իսկ ինձ կսովորեցնե՞ս:

-Մի՞թե դու հաչալ չիտես,-զարմացավ որսորդի շունը:

-Չեմ կարողանում,-տխուր խոստովանեց միայնակ շունը:

-Դե ուրեմն լսիր և ուշադիր նայիր՝հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ...

-Հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ,-միանգամից արտաբերեց մեր շունը:

Շունը,հազիվ զսպելով արցունքները,ինքն իրեն մտածեց.

« Վարջապես ես գտա իսկական ուսուցչի » :

« Լացել» բառը

Այս պատմությունը դեռ տեղի չի ունեցել, սակայն այն անպայման տեղի կունենա Վաղը: Ահա այս պատմությունը:

Այդ օրը, որը կոչվում է «Վաղը», մի տարեց ուսուցչուհի կանգնեցնում է իր աշակերտներին զույքերով և տանում Անցյալի Թանգարան, որտեղ հավաքված են իրեր, որոնք արդեն ոչ ոքի պետք չեն: Ինչպես որ, օրինակ, թագավորական թագը, թագուհու երկայնափեշը, տրամվայ և նման բաներ:

Մի փոքրիկ փոշոտված ցուցասեղանին, ապակու տակ, դրված էր «լացել» բառը: Վաղվա Օրվա աշակերտները կարդացին պիտակը, բայց ոչինչ չհասկացան:


Թանգարան



-Սինյորա, իսկ ի՞նչ է սա

- Հավանաբար, հին զա՞րդ։

- Մի գուցե ինչ-որ էտրուսկական բա՞ն է։

Ուսուցչուհին բացատրեց երեխաներին, որ առաջ, շատ-շատ վաղուց, այս բառը շատ էր օգտագործվում և մարդկանց շատ դժբախտություն էր բերում։ Նա ցույց տվեց մի ապակե անոթ և ասաց, որ դրա մեջ պահվում են արցունքներ։ Մի գուցե դրանք թափել է իր տիրոջ կողմից ծեծված մի դժբախտ ստրուկ, իսկ, մի գուցե, ինչ-որ մի տղա, որը մնացել էր անօթևան։

- Արցունքները նման են ջրի, - ասաց աշակերտներից մեկը։

- Այո, բայց դրանք այրում են, - պատասխանեց ուսուցչուհին։

- Աաաա, դրանք, հավանաբար, օգտագործելուց առաջ եռացնում են, - գլխի ընկավ ինչ-որ մեկը։



Ոչ, այս աշակերտները ոչինչ չէին հասկանում: Ի վերջո նրանց շատ ձանձրալի դարձավ այդ ցուցասրահում: Այդ ժամանակ ուսուցչուհին նրանց տարավ թանգարանի մյուս ցուցասրահներ, որտեղ նրանք տեսան իրենց համար ավելի հասկանալի իրեր՝ բանտաճաղեր, պահակաշան խրթվիլակ, կողպեք և այլն: Այդ բոլորը իրեր էին, որոնք վաղուց արդեն չկան Վաղվա Օրվա ամենաերջանիկ երկրում:

Պաղպաղակից դղյակը

Ժամանակին, Բոլոնիայի ամենագլխավոր հրապարակում կառուցել էին մի դղյակ, որը պաղպաղակից էր: Քաղաքի բոլոր ծայրերից երեխաները փախչում-գալիս էին այստեղ, որպեսզի մի փոքր քաղցրավենիք համտեսեին:

Դղյակի տանիքը կաթնային սերուցքից էր, ծխնելույզներից բարձրացող ծուխը՝ ձևավոր շաքարից, իսկ ծխնելույզները՝ շաքարամրգից: Մնացած ամեն ինչը պաղպաղակից էր՝ դռները, պատերն ու կահուքը:

Մի փոքրիկ տղա բռնեց սեղանի ոտքը և սկսեց լիզել այն: Հետո նա կերավ երկրորդ ոտքը, երրորդը, իսկ երբ վերջացրեց ուտել չորրորդ ոտքը, սեղանը ՝ իր ափսեներով, որոնք, ի դեպ , ամենալավ շոկոլադե պաղպաղակից էին, ընկավ ուղիղ նրա վրա...



Հանկարծ քաղաքի պահակը նկատեց, որ դղյակի մի պատուհանը հալչում է: Նրա ապակիները, որոնք ելակի պաղպաղակից էին, վարդագույն առվակի նման հոսում էին ցած:

- Եկե՛ք այստե~ղ, արագ եկե՛ք այստե~ղ,- կանչեց պահակը երեխաներին:

Բոլորը վազելով եկան և սկսեցին լիզել վարդագույն առվակը, որպեսզի ոչ մի կաթիլ այս հրաշք առվակից չկորչի:

Հանկարծ մի ծեր կին, ով նույպես հրապարակ էր եկել, սակայն չէր կարողացել խցկվել ամբոխի մեջ, խնդրելով ասաց,

–Բազկաթո~ռը, տվե~ք ինձ բազկաթոռը: Տվե~ք բազկաթոռը խեղճ տատիկին: Օգնե՛ք ինձ: Բազկաթո~ռը, և, եթե հնարավո~ր է, հենակներով...

Մի շատ պատրաստակամ հրշեջ վազեց դղյակ և բերեց բազկաթոռ, որը կրեմ-բրյուլեից էր: Խեղճ տատիկը շատ ուրախացավ, և ամենասկզբից սկսեց լիզել բազկաթոռի թևերը:

Այո՛, սա մեծ օր էր Բոլոնիայում: Իսկական տոն էր:

Բժիշկների հրամանով ոչ մեկի փորիկը չցավեց:

Եվ մինչև օրս էլ, երբ երեխաները խնդրում են գնել

երկրորդ բաժին պաղպաղակը, նրանց

ծնողները խոր հոգոց են հանում.

-Է՛հ, փոքրիկ ընկեր, քեզ համար, երևի, պետք է գնենք պաղպաղակից մի ամբողջ դղյակ. այն որ Բոլոնիայում կար. միգուցե, այդ ժամանակ դու գոհանաս:

Երկու ուղտ

Մի անգամ մի սապատանի ուղտը երկու սապատանի ուղտին ասաց.
-Ընկերս, ես քեզ ցավակցում եմ:
-Թույլ տուր հայտնեմ իմ ցավակցությունը:
-Իսկ ի՞նչ է պատահել, -զարմացավ նա:
-Տեսնում եմ ,տեսնում եմ, - շարունակում է մի սապատանի ուղտը,- դու նույնիսկ չես էլ հասկանում թե ինչքա ն դժբախտ ես:
- Չէ, որ դու նույնպես ուղտ ես, բայց թերություններով, դու մեկ սապատի փոխարեն երկուսն ունես և դա իհարկե շա տ-շա տ տխուր է :
- Կներես ինձ, - պատասխանեց երկսապատավոր ուղտը,- ես չէի ուզում դա քեզ ասել և նեղացնել, բայց քանի որ դու այդ մասին արդեն խոսեցիր, դե իմացիր, որ երկուսիցս դժբախտը դու ես, որովհետև այդ դու ես դեֆեկտով:
Այդ քո մոտ է մեկի փոխարեն երկու սապատ, իսկ բոլոր նորմալ ուղտերը ունեն մի սապատ:



- Այսպես նրանք կռվեցին բավական երկար ժամանակ, նույնիսկ արդեն ուզում էին իրար ծեծել, հանկարծ հայտնվեց բեդվինը:
-Արի նրանից հարցնենք, թե մեզնից ո՞վ է ճիշտը:
Բեդվինը համբերատար լսեց և ասաց.

- -Հարգելիներս, դուք երկուսդ էլ դեֆեկտով եք, բայց հարցը սապատներում չի:
  Այն ձեզ տվել է բնությունը:
  Երկսապատանին գեղեցիկ է նրանով, որ ունի երկու սապատ, իսկ միսապատանին նրանով, որ ունի մի սապատ:
  Երկուսիդ գլխավոր թերությունը ձեր գլխում է, իսկ դուք մինչև հիմա չե՞ք հասկացել:

Հինգի արկածները

– Օգնեցե՛ք, օգնեցե՛ք՝ փախչելով կանչում է խեղճ հինգը:

-Ի՞նչ է քեզ հետ պատահել:

-Մի՞թե չեք տեսնում: Հանումն ընկել է ետևից,եթե հասնի դժբախտություն կլինի:

-Հո չասացիր, դժբախտություն...

Բայց դժբախտությունը պատահեց: Հանածը հասավ հինգին ու սկսեց թալանել նրան սուր թրով՝ հանածի նշանով :

+ = 5 4
5 - 1 = 1 4
1 5
= 2 2
5 2

Համա թե բաժին ընկավ մեր խեղճ հինգին,
բայց,ի ուրախություն, այնտեղով անցնում էր երկար արտասահմանյա
ն մեքենա՝ ահա
այսպիսի երկար:Հանումը մի վայրկյան շրջվեց, որպեսզի տեսնի, հնա
րավոր չէ ա՞ռդյոք մեքենան
կարճացնել մի փոքր, ու հինգը անմիջապես թաքնվեց շքամուտքում:
Միայն թե դա արդեն
ոչ՚ թե հինգ էր այլ չորս էր, այն էլ կոտրված քթով:

-Խե՛ղճ, ինչ է պատահել: Դու կռվե՞լ ես որևէ մեկի հետ:

-Տե՞ր աստված: Փրկվի՞ր ով կարող է: Ինչպիսի՞ մեղրաձոր ձայն:

Իհարկե, դա բաժանումն էր՝հենց
ինքը: Դժբախտ չորսը հազիվ լսելի ձայնով շշնջաց.

- Բարի երեկո ,- և փորձեց մի կողմ ցատկել, բայց բաժանումը
ավելի ճարպիկ գտնվեց և մի մկրատի չխկոցով չորսին երկու կեսի բ
աժանեց.

Երկուս և երկուս: Բաժանումը մի երկուսին թաքցրեց գրպանում,
իսկ մյուսը, պահը հարմարեցնելով, դուրս փախավ և նստեց տրամվ
այ:

Դեռ մեկ րոպե առաջ ես հինգ էի:

Լաց էր լինում երկուսը: Իսկ հիմա տեսեք,
թե ինչի եմ վերածվել :

2x3=6

Ի պատասխան, մրթմրթաց ուղեկցորդուհին.

Որոշ մարդիկ պետք է իրենք հասկանան, որ իրենց ավելի լավ է ոտքով քայլել, այլ ոչ թե տրամվայ նստել:

Բայց չէ՞ որ դա իմ մեղքը չէ: Ես կապ չունեմ: Չէ՞ որ ես մեղավոր չեմ՝ կարմրելով բացականչեց երկուսը:

-Այո, իհա՜րկե, քեռին է մեղավոր: Բոլորն էլ այդպես են ասում:

Երկուսը դուրս եկավ առաջին իսկ կանգառում, կամրատակած՝ ինչպես բազկաթոռի պաստառը:

Եվ այստեղ նրա բախտը նորից չբերեց. նա ինչ որ մեկի ոտքին կանգնեց:

-Ախ, ներեցեք, խնդրում եմ սենյորա

Բայց սենյորան, պարզվում բոլորովին էլ չբարկացավ, այլ ընդհակառակը, նա նույնիսկ ժպտաց:

Հապա մի տեսեք, չէ՞, որ սա սենյորա բազմապատկումն է: Նա շատ բարի սիրտ ունի
և նա շատ է խղճում մարդկանց, երբ նրանք ընկնում են անհաջողությունների մեջ:

Նա անմիջապես բազմապատկեց երկուսը երեքով, և ահա, մեր առջև հիանալի վեց թվանշանն է: Ինչո՞ւ հիանալի: Չէ՞ որ դա հինգին գումարածն է: Ոչ մի ուսուցիչ երբեք վեց չի նշանակի, այլ հինգին կավելացնի գումարած:

-Ուռ՜ա, հիմա ես հինգին գումարած եմ
և ինձ կփոխադրեն հաջորդ դասարան:

Բովանդակություն

- Երկիր, որտեղ բոլոր մարդիկ կարագից էին պատրաստված(թարգ. Լ.Գասպարյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)----------էջ 2-5
- Մուկը, որը կատուներ էր ուտում(թարգ. Լ. Գասպարյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)
- ----------էջ 6-11
- Ուսումնական կոնֆետը(թարգ. Լ. Գասպարյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)-էջ 12-16
- Թափանցիկ Ջակոմոն (թարգ. Լ. Գասպարյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)---էջ 13-20
- Շոկոլադե ճանապարհը (թարգ. Լ. Գասպարյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)-էջ 21-24
- Ինչպես էր մի տղա խաղում հենակով(թարգ. Լ. Գասպարյանը, մշակեց Ա Պետրոսյանը)----------էջ 25-28
- Շունը, որը հաչալ չգիտեր (թարգ. Ս.Խաչատրյանը)----------էջ 29-40
- <<Լացել>> բառը (թարգ. Ս.Խաչատրյանը)----------էջ 41-45
- Պաղպաղակից դղյակը (թարգ. Թ. Մարիմյանը, մշակեց Ա. Պետրոսյանը)-----էջ 46-49
- Երկու ուղտ (թարգ. Ս.Խաչատրյանը)----------էջ 50-53
- Հինգի արկածները (թարգ. Ս.Խաչատրյանը)----------էջ 54-59

- Նկարները նկարեցին Հիմնական դպրոցի 2-րդ դասարանի սովորողներ՝ Դ. Մկրտչյանը, Դ. Հարությունյանը, Ա. Արզումանյանը, Ս. Մանուկյանը, Ա. Հակոբյանը
- Աղբյուրը՝rodari.ru էլ.կայք